ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բնական գիտ. XII, № 9, 1959 Биологические науки

Ն. Ա. ՆԱՈՒՄՈՎ

Հուլիսի 6-ին Լենինգրադում, ծանր ու երկարատև հիվանդությունից հետո, 72 տարեկան հասակում վախճանվեց մեր երկրի ականավոր ֆիտոպաթոլոգ ու միկոլոգ, 1946 թվականից ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գյուղատնտեսական ու կենսաբանական դիտությունների դոկտոր-պրոֆեսոր Նիկոլայ Ալեքսանդրովիչ Նաումովը:

Ն. Ա. Նաումովը իր տաղանդի, ջանասիրության և մեծ գիտելիքների շնորհիվ աջող կերպով անցավ առաջին շարքերը, ստեղծելով միկոլոգիայի և ֆիտոպաթոլոգիայի մի բանի օջախներ, այդ թվում Լենինգրադի համալսարանում և Գյուղատնտեսական ինստիտուտում, որտեղ նա գլխավորում էր ֆիտոպաթոլոգիայի ու միկոլոգիայի ամբիոնները:

Ն. Ա. Նաումովին հավասարապես հետաքրքրում էին և ֆիտոպաթոլոգիան, և միկոլոգիան, դիտության այդ երկու բնագավառներում էլ նա օժտված էր մեծ լրուզիցիայով և անփոխարինելի էր վայելում:

Ն. Ա. Նաումովի առավել կարևոր ֆիտոպաթոլոգիական հետազոտություններից պետք է նշել այն հարցերի ուսումնասիրությունը, որոնք վերաբերվում են հարբեցնող հացի երևույթին հացահատիկային կուլտուրաների վրա, կաղամբի պալարին, հացարույսերի ժանգին, բույսերի վիրուսային հիվանդություններին, ոչ պարազիտային հիվանդություններին, ֆունգիսիդներին, բույսերի իմունիտետին և այլն: Հացարույսերի ժանգերի վերաբերյալ նրա մենագրական աշխատությունը հանդիսանում է համաշխարհային հսկայական գրականության սեղմ, բարեխիղճ ու բնագիտական շարադրանքը և առաձեն գիրք է այն անձանց համար, որոնք հետաքրքրվում են պարազիտային սնկերի չափազանց յուրահատուկ այդ խմբի կենսաբանությամբ և նրա դեմ մղվող պայքարի միջոցառումներով:

Ն. Ա. Նաումովը մեծ ծառայություն մատուցեց երկրի գյուղատնտեսությանը՝ համապատասխան բնագավառների համար ագրոնոմների, ֆիտոպաթոլոգների, միկոլոգների և գիտական աշխատողների կադրեր պատրաստելիս: Գյուղատնտեսական բույսերի հիվանդությունների վերաբերյալ նրա կազմած դասընթացն ունեցել է մի քանի հրատարակություն և նրանից օգտվել ու օգտվում են մեր երկրի բոլոր համապատասխան բուհերում: Նա ինքը հրապարակել է շատ օգտակար գրքեր, որոնք վերաբերվում են ֆիտոպաթոլոգիայի մեջ միկրոսկոպիական տեխնիկային (1932 թ.), միկոլոգիական ու ֆիտոպաթոլոգիական հետազոտությունների մեթոդներին (1937 թ.) և բուսաբանական միկրոտեխնիկայի հիմունքներին: Այդ աշխատությունները Ն. Ա. Նաումովը կազմել է, գլխավորապես, այն դասախոսությունների ու գործնական պարապմունքների հիման վրա, որ նա անձամբ անց է կացրել Լենինգրադի կիրառական կենդանաբանության և ֆիտոպաթոլոգիայի ինստիտուտում 1922—1925 թվականներին:

Ն. Ա. Նաումովը շատ ջանքեր և մեծ ուշադրություն էր նվիրում երկրի միկոլոգիական ֆլորայի ուսումնասիրման և Սովետական Միության գիտության այդ ճյուղի պարագման գործին: Նրա կողմից առանձնապես մանրամասնորեն ուսումնասիրվել են Լենինգրադի մարզի, Ուրալի, Ղրիմի և մեր Հայրենիքի ուրիշ շատ վայրերի սնկային ներկայացուցիչները, կազմվել են սնկերի որոշիչներ և մի շարք այլ աշխատություններ: Նա նկարագրել է սնկերի՝ գիտության համար նոր առնվազն 160 տեսակներ և 20 նոր ցեղեր:

Առաջին շրջանի միկոլոգիական աշխատություններից ուշադրության առանձնապես արժանի է Մուկորյան սնկերին նվիրված աշխատությունը: Այդ աշխատությունը հրատարակվեց ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Ֆրանսիայում, որտեղ այն լույս տեսավ 1939 թվականին, որպես միկոլոգիական հանրագիտարանի 9-րդ հատոր:

Բարձր գնահատելով այդ աշխատությունը, ֆրանսիայի Բուսաբանական ընկերության պրեզիդենտ, պրոֆ. Պիեր Ալորջը հրատարակության առաջաբանում գրում էր, որ պրոֆ. Նաումովի աշխատությունը ճկարելի է դիտել որպես պարզության և երկարամյա

փորձերի ու քննադատական միանգամայն հմուտ մոտեցման վրա հիմնված գիտական էրուդիցիայի հզորության տիպարն է:

1920 թվականից սկսած, Ն. Ա. Նաումովը ակտիվորեն մասնակցում էր համամիութենական բուսաբանական ընկերության միկոլոգիայի և ֆիտոպաթոլոգիայի սեկցիայի աշխատանքներին, որտեղ սկզբում նա սեկցիայի քարտուղարն էր, ապա՝ նախագահի տեղակալը, իսկ ավելի ուշ՝ նախագահը:

Ն. Ա. Նաումովը ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնք լսել են նրա դասախոսությունները և նրա ղեկավարությամբ ձեռք են բերել հետազոտական ու մանկավարժական աշխատանք կատարելու ունակություններ: Իր բացառիկ համեստության և, դրա հետ մեկտեղ, իր աշակերտների ու ստորադրյալների նկատմամբ պարզ վերաբերմունքի շնորհիվ Ն. Ա. Նաումովը արժանացավ մեծ հարգանքի, և նրա մերձավոր աշակերտներն ու աշխատակիցները միշտ էլ առատորեն օգտվում էին նրա դիտելիքներից ու փորձերից:

Ներկայումս Ն. Ա. Նաումովի բազմաթիվ աշակերտներ մեր բազմազգ երկրի տարբեր մարզերում ու ռեսպուբլիկաներում առաջատար տեղ են գրավում ֆիտոպաթոլոգիայի, միկոլոգիայի և բույսերի պաշտպանության բնագավառում:

Ն. Ա. Նաումովը ժողովրդականություն ու հեղինակություն էր վայելում ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում: Դեռևս 1928 թվականին միջազգային ֆիտոպաթոլոգիական հանդես ստեղծելիս („Phytopathologische Zeitschrift"), որը հրատարակվում է Բևոլինում, նա մտավ այդ հանդեսի խմբագրական կոլեգիայի առաջին կազմի մեջ: Նա անդամ էր Ֆրանսիայի միկոլոգիական ընկերության, Լիոն քաղաքի Լիննեևյան ընկերության, Գերմանիայի կիրառական բուսաբանության միավորման: Նա միջազգային բուսաբանական կոնգրեսներում միկոլոգիական նոմինկլատուրային հարցերի գծով մշտապես գործող շատ հանձնաժողովների անդամ էր:

Գիտա-մանկավարժական և հասարակական գործունեության համար Ն. Ա. Նաումովը ՍՍՌՄ կառավարության կողմից պարգևատրվել է Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, նրա գործունեությունը երկու անգամ (1940 և 1958 թթ.) նշվել է հոբելյաններով:

Ն. Ա. Նաումովը անցավ կյանքի մի ուղի, որը հագեցած է աշխատանքով ու ստեղծագործությամբ: Անխոնջ աշխատավոր, մեծ գիտնական, իսկական քաղաքացի և վերին աստիճանի համեստ մարդ — ահա այն հատկությունները, որոնք բնորոշում են Նիկոլայ Ալեքսանդրովիչ Նաումովի կերպարը:

Ա. Ա. ԲԱԲԱՑԱՆ